


ԱՌԱՋԱՎՈՐԱՍԻԱԿԱՆ ՊԱՏՄԱՎԻՊԱԿԱՆ ԿԵՐՊԱՐՆԵՐԸ ՀԱՅ ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅԱՆ ՄԵՋ. ԳԻՐՔ Ա / Աշխատասիրությամբ Է. Հ. Խեմյանի, Երևան, ՀԱԻ հրատ., 2025, 576 էջ\*:

*Բանալի բառեր՝ առաջավորասիական, պատմական դեմքեր, ժողովրդականություն, փոխներթափանցում, արխիվային նյութ, ավանդական բանահյուսություն, մշակույթ:*

Հայ ժողովրդի բանահյուսական երկացանկի ձևավորման ու զարգացման վրա նշանակալի ազդեցություն են թողել մերձավորարևելյան տարածա-



շրջանի ժողովուրդների հետ ունեցած մշակութային ու քաղաքակրթական դարավոր շփումները: Այդ բազմաշերտ հարաբերությունների արդյունքում թե՛ բանավոր և թե՛ գրավոր ճանապարհով մի շարք պատմական դեմքերի վիպական կերպարների հետ կապված պատմություններն ու զրույցները փոխառնվել, տեղայնացվել, յուրովի վիպականացվել են՝ էապես հարստացնելով հայ վիպական բանահյուսական ժառանգությունը:

2025 թ. ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի հրատարակած «Առաջավորասիական պատմավիպական կերպարները հայ բանահյուսության մեջ» ժողովածուն հենց այս համատեքստում իրականացված առաջին համապարփակ ու համակարգված գիտական փորձն է՝ ի մի բերելու հայ բանահյուսության մեջ տարածված այն պատումները, որոնց առանցքում Առաջավոր Ասիայի պատմության մեջ նշանակալից դեր խաղացած պատմական անձինք են:

Ակադեմիական այս հրատարակությունը հենվում է Հնագիտության և ազգագրության ինստիտուտի արխիվային նյութերի և բանահավաքչական հարուստ ավանդույթի վրա՝ ընթերցողին ներկայացնելով հիմնականում անտիպ ու առաջին անգամ հրապարակվող բնագրեր: Ժողովածուն ընդգրկում է մ. թ. ա. X դ. մինչև մ. թ. XVII դ. առաջավորասիական նշանավոր պատմական գործիչների (Սողոմոն Իմաստուն, Խիկար Իմաստուն, Ալեքսանդր Մակեդոնացի, Լոխման Հեքիմ, Դանանդա Բահլուլ, Լենկ Թեմուր, Շահ Աբաս, Սուլթան Մուրադ) շուրջ հյուսված պատումները: Ժողովածուի գրախոսներն են բ. գ. թ. Ա. Յ. Սարգսյանը, բ. գ. թ. Ս. Մ. Ռամազյանը: «Խմբագրի կողմից» խոսքում

\* Ներկայացվել է 06. III. 2025 թ., ընդունվել է տպագրության 20. III. 2026 թ.:

(էջ 5–6) ք. գ. թ. Տորք Դալայանը կարևորում է, որ այն հայ իրականության մեջ առաջին փորձն է՝ համակարգված ներկայացնելու պատմական անձանց, որոնք լրացրել են մեր բանահյուսության մեջ առկա հայ վիպապատմական հերոսների շարքը: Ըստ խմբագրի՝ հերոսների ընտրությունը պայմանավորված է նախ՝ նրանց առաջավորասիական պատկանելությամբ, և երկրորդ՝ հայ ավանդական բանահյուսության մեջ նրանց լայն ճանաչելիությամբ: Դալայանն ընդգծում է, որ նշված կերպարները չի կարելի դիտարկել ազգային էպոսների հերոսների հետ նույն հարթության մեջ, քանի որ վերջիններս, թեև ունեն պատմական նախահիմքեր, սակայն լիովին վերածվել են վիպական կերպարների, մինչդեռ ժողովածուի հերոսների առաջնային բնորոշումը հենց նրանց իրական պատմական դեմք լինելն է: Խմբագիրը համաձայն է «վիպապատմական» եզրույթին, քանի որ վերջինս արտացոլում է բանահյուսական այն մեխանիզմները, որոնց միջոցով ժողովրդական մտածողությունը պատմական անձերին «տեղավորել» է առասպելաբանական և վիպաբանական կաղապարների մեջ: Ի վերջո, խմբագիրն արժևորում է ժողովածուն կազմող էսթեր Խեմչյանի բանագիտական և բանահավաքչական գործունեությունը, որի պտուղն է հիշյալ աշխատությունը:

Ժողովածուն կազմող և առաջաբանի հեղինակ էսթեր Խեմչյանը, խորանալով նյութի բովանդակային շերտերի մեջ, նշում է, որ ժողովրդական պատումներն իրենց խորքում պահել են հեռավոր անցյալի արձագանքները, որտեղ իրական անհատները վերածվել են առանցքային վիպական կերպարների: Նա նշում է, որ ժողովածուում ընդգրկվել են այն հերոսները, որոնց իրական գործունեությունը ծավալվել է Հայաստանից դուրս, սակայն նրանց մասին գրույցները հայկական միջավայրում տեղայնացվել են՝ ձեռք բերելով ազգային դիմագծեր: Ժողովածուն կազմողը նշում է, որ ի տարբերություն աստվածաշնչյան կերպարների (Ադամ, Նոյ նահապետ, Հոր և այլն), որոնք լիովին «ազգայնացվել» են, վիպապատմական այս հերոսները հայ իրականության մեջ գիտակցվել են որպես «համընդհանուր արևելյան» կերպարներ (էջ 7–8):

Առաջաբանում մանրամասնվում է հերոսների ընտրության սկզբունքը, որը հենվում է ոչ միայն նրանց պատմական նշանակության, այլև հայ բանահյուսության մեջ ունեցած լայն տարածվածության և ժողովրդականության վրա: Հեղինակը բացատրում է նաև որոշ կերպարների բացակայությունը. օրինակ՝ Մովսես Նաբեդդինը դուրս է մնացել նյութի ծավալի և ժանրային առանձնահատկության, իսկ Քյոռոլին՝ էպոսագիտական հետազոտության նյութ լինելու պատճառով (էջ 7–8):

Է. Խեմչյանը հատուկ անդրադառնում է գրավոր ու բանավոր ավանդույթների փոխներթափանցմանը՝ մատնանշելով, որ միջնադարյան թարգմանական հուշարձանները, ինչպիսիք են Կեղծ-Կալիսթենեսի «Պատմութիւն Աղեքսանդրի Մակեդոնացոյ»-ն ու «Պատմութիւն և խրատք Խիկարայ Իմաստոյ»-ն էական դեր են խաղացել այս կերպարների (Սողոմոն Իմաստուն, Խիկար Իմաստուն, Ալեքսանդր Մակեդոնացի, Լոխման Հեքիմ, Դանանդա Բահլույ) ժողովրդականացման և բանահյուսական մշակման գործում: Առանձնակի շեշտվում են կերպարների գործառույթային նմանությունները, որոնք հանգեցնում են սյուժետային միահյուսումների. օրինակ՝ «Իմաստուն» պատվանունը կրող հերոսների շուրջ

հյուսված որոշ պատումներ կարող են նույնությամբ անցնել մի հերոսից մյուսին: Նաև նկատվում է «եղջերակիր թագավորի» հնագույն մոտիվի տեղափոխումը Ալեքսանդր Մակեդոնացուց դեպի Շահ Աբաս կամ Սուլթան Մուրադ: Փաստվում է, որ եթե որոշ կերպարներ (Լենկ Թեմուր, Շահ Աբաս, Սուլթան Մուրադ) հայ բանահյուսության մեջ պահպանել են իրական պատմական դաժանության հետքերը, ապա մյուսները (Սողոմոն Իմաստուն, Խիկար իմաստուն, Դանանդա Բահուլ և Լոխման Հեքիմ) վերածվել են իմաստության տիպարների, որոնց արմատները հասնում են մինչև շումերական մշակութային շերտեր (էջ 9):

Բնագրերն ընտրելու և դասակարգելու հարցում կազմողը առաջնորդվել է պատումների սյուժետային անադարտությունը և բարբառային առանձնահատկությունները պահպանելու սկզբունքով:

Ժողովածուի ութ բաժնից յուրաքանչյուրը սկսվում է տվյալ հերոսի պատմական անձը ներկայացնող հակիրճ տեղեկատվությամբ, իսկ ծանոթագրություններում տրված են բնագրերի արխիվային համարները, նյութի գրառման վայրը, ժամանակը և տեղեկություններ բանասացիների ու բանահավաքների մասին: Ընդարձակ բառարանը և անձնանունների ու տեղանունների ցանկերը լրացնում և դյուրացնում են բանահյուսական տեքստերը ճիշտ ընկալելու և ուսումնասիրելու գործընթացը: Մեթոդաբանական տեսանկյունից կիրառվել է բանագիտական համեմատական մոտեցումը. որոշ պատումներ դասակարգված են ըստ ATU (Aarne-Thompson-Uther) միջազգային համացուցի տիպերի, ինչը հնարավորություն է տալիս հայ բանահյուսությունը դիտարկել համաշխարհային մշակութային ժառանգության համատեքստում:

Ժողովածուն ունի նաև հապավումներ և համառոտագրություններ, գրականության ցանկ, հայերեն, ռուսերեն և անգլերեն ամփոփումներ:

Է. Խեմչյանի ջանքերով ստեղծված սկզբնաղբյուրային այս հավաքածուն, որը միավորում է արխիվային անտիպ էջերն ու կազմողի շուրջ կեսդարյա դաշտային գրառումները, դառնում է անփոխարինելի գիտական ավանդ ինչպես բանագետների ու բարբառագետների, այնպես էլ պատմաբանների և հայագիտական հետաքրքրություն ունեցողների համար: Ժողովածուն կարևոր նշանակություն ունի բանահյուսական թանկարժեք նմուշները պահպանելու, ինչպես նաև հայկական մշակույթն առաջավորասիական ընդհանուր քաղաքակրթական համատեքստում դիտարկելու առումով:

ԼՈՒՍԻՆԵ ՂՈՒԵՋՅԱՆ

Բ. գ. թ., ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի բանագիտության բաժնի գիտաշխատող, Գավառի պետական համալսարանի դոցենտ: Գիտական հետաքրքրությունները՝ ժողովրդական ասոյթաբանության հմայական բանաձևերի հիմնապետակներ: Հեղինակ է 1 գրքի և շուրջ 50 հոդվածի: ORCID: 0000-0001-8755-3967. ghrejan76@mail.ru